ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 30

«11» 04 2018 թ. ք. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի N 31 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազներին ամենամյա հերթական արձակուրդի և օրենքով սահմանված արձակուրդների այլ տեսակների տրամադրման ընթացակարգերը հստակեցնելու և դրա հետ կապված հարաբերություններն օրենսդրությանը համապատասխան կանոնակարգելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 67-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազներին արձակուրդ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2015 թվականի հունիսի 19-ի «Դատախազներին արձակուրդ տրամադրելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի մայիսի 31-ի N 21 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 31-ի հրամանը:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 11-ի
թիվ «30» հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազներին ամենամյա հերթական արձակուրդ և օրենքով սահմանված արձակուրդների այլ տեսակներ տրամադրելու կարգը:

2. Դատախազների ամենամյա արձակուրդն օրացուցային օրերով հաշվարկվող ժամանակահատված է, որը տրամադրվում է դատախազին՝ հանգստանալու և աշխատունակությունը վերականգնելու համար:

3.Դատախազին ամենամյա հերթական արձակուրդը պետք է տրամադրվի այնպես, որ չխոչընդոտվի դատախազության բնականոն գործունեության իրականացումը:

4. Արձակուրդի ընթացքում պահպանվում է դատախազի աշխատատեղը (պաշտոնը) և վճարվում է միջին աշխատավարձ:

5. Դատախազներին արձակուրդ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային օրենսդրությանը, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ օրենք), սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. Արձակուրդի տևողությունը

6. Դատախազների ամենամյա հերթական վճարովի նվազագույն արձակուրդի տևողությունը 30 աշխատանքային օր է:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի «Ամենամյա լրացուցիչ արձակուրդի իրավունք ունեցող առանձին կատեգորիայի աշխատողների ցանկը, այդ արձակուրդի նվազագույն տևողությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին» N 1384-Ն որոշմամբ դատախազներն ունեն նաև 7 աշխատանքային օր ամենամյա լրացուցիչ արձակուրդ ստանալու իրավունք:

8. Գիտական ատենախոսություն պաշտպանելու նպատակով դատախազն ունի մինչև 30 աշխատանքային օր տևողությամբ լրացուցիչ չվճարվող արձակուրդի իրավունք:

9. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածով սահմանված հիմքերից կամ հարգելի այլ պատճառներից ելնելով՝ դատախազներին չվճարվող արձակուրդ կարող է տրամադրվել մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 30 օր տևողությամբ:

10. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված արձակուրդը կարող է միացվել սույն կարգի 6-րդ կետով սահմանված արձակուրդին և տրամադրվել միասին կամ առանձին՝ դատախազի ընտրությամբ:

11. Դատախազի ցանկությամբ ամենամյա հերթական արձակուրդը կարող է տրամադրվել մասերով: Վճարովի արձակուրդի մասերից մեկը պետք է կազմի առնվազն երկու անընդմեջ աշխատանքային շաբաթ, եթե դատախազի և նրա անմիջական ղեկավարի միջև այլ համաձայնություն առկա չէ:

III. Ամենամյա հերթական արձակուրդ տրամադրելու կարգը

12. Յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա հերթական վճարովի արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ տարում:

13. Առաջին անգամ դատախազի պաշտոնում նշանակվելիս աշխատանքային առաջին տարվա համար ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է տվյալ պաշտոնում անընդհատ աշխատանքի վեց ամիսը լրանալուց հետո: Աշխատանքային երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է աշխատանքային տարվա ցանկացած ժամանակ՝ ամենամյա արձակուրդի տրամադրման հերթականությունը սահմանող ժամանակացույցին (այսուհետ՝ ժամանակացույց) համապատասխան:

14. Ժամանակացույցը կազմվում է դատախազի ու նրա անմիջական ղեկավարի կողմից համատեղ և մինչև տվյալ տարվա հունվարի 30-ն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին (այսուհետ՝ անձնակազմի կառավարման բաժին): Եթե դատախազը նշանակվել է պաշտոնի տվյալ տարվա հունվարի 30-ից հետո մինչև տվյալ տարվա հունիսի 20-ը ներառյալ, ապա արձակուրդի գրաֆիկը ներկայացվում է տվյալ դատախազի նշանակման օրվանից 10 օրվա ընթացքում:

15. Արձակուրդի գրաֆիկը կազմելիս հաշվի են առնվում՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 3-5-րդ, 7-8-րդ մասերով սահմանված պահանջները.

2) դիմողի ցանկությունը,

3) աշխատանքի բնականոն ընթացքն ապահովելու անհրաժեշտությունը, դիմողի աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու զբաղվածությունը,

4) դիմողի՝ վերապատրաստմանն ու հերթական (լրացուցիչ) ատեստավորմանն ընդգրկված լինելու հանգամանքները,

5) տվյալ ստորաբաժանմանը (դատախազությանը) և դատախազներին վերապահված գործառույթների իրականացման առանձնահատկությունները:

16. Ժամանակացույցը կարող է փոփոխվել դատախազի և նրա անմիջական ղեկավարի համաձայնությամբ:

17. Ժամանակացույցում չեն ներառվում Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի (այսուհետ՝ գլխավոր դատախազ) տեղակալները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի, կայազորների զինվորական դատախազները, զինվորական դատախազի տեղակալները, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության ավագ դատախազները (դատախազներ):

18. Սույն կարգի 17-րդ կետում նշված պաշտոնատար անձինք իրենց արձակուրդի տրամադրման ժամանակահատվածը համաձայնեցնում են գլխավոր դատախազի հետ:

19. Դատախազի արձակուրդի դեպքում անմիջական ղեկավարը նրա պարտականությունները վերաբաշխում է այլ դատախազների միջև:

20. Դատախազին արձակուրդ տալու դեպքում՝ տվյալ դատախազի կողմից համապատասխան զեկուցագրով ներկայացված նրա մոտ գտնվող բոլոր գործերը, նյութերը և այլ փաստաթղթերը ղեկավարի հանձնարարությամբ բաշխվում են մյուս դատախազների միջև՝ համապատասխան ընդունման-հանձնման ակտի հիման վրա:

IV. Արձակուրդի համար դիմելը

21. Արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դիմումը դատախազը հասցեագրում է գլխավոր դատախազին կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալին՝ սույն կարգի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերով սահմանված բաշխմամբ:

22. Սույն կարգի 17-րդ կետում նշված պաշտոնատար անձինք դիմումը հասցեագրում են գլխավոր դատախազին, որոնց արձակուրդ տրամադրվում է նրա հրամանով:

23. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղակալները, ավագ դատախազները և դատախազները, Երևան քաղաքի դատախազի, Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազների, մարզերի դատախազների տեղակալները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի դատախազությունների ավագ դատախազները և դատախազներն արձակուրդի դիմումը, անմիջական ղեկավարի համաձայնությունն արտահայտող նշագրումով, ըստ համապատասխան համակարգման ոլորտի, հասցեագրում են գլխավոր դատախազի տեղակալին, որոնց արձակուրդ տրամադրվում է նրա հրամանով:

Գլխավոր դատախազի համակարգման ոլորտում գտնվող Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների տեղակալները, ավագ դատախազներն ու դատախազները արձակուրդի դիմումը հասցեագրում են գլխավոր դատախազին, որոնց արձակուրդ տրամադրվում է նրա հրամանով:

24. Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազները (դատախազները), բաժինների պետերը, բաժինների ավագ դատախազները և դատախազները, կայազորների զինվորական դատախազների տեղակալները, ավագ դատախազները և դատախազներն արձակուրդի դիմումը, անմիջական ղեկավարի համաձայնությունն արտահայտող նշագրումով, հասցեագրում են Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազին, որոնց արձակուրդ տրամադրվում է նրա հրամանով:

25. Դիմումում նշվում է արձակուրդի տեսակը (տարեկան հերթական արձակուրդի դեպքում նշվում է կոնկրետ տարին, չվճարվող արձակուրդի դեպքում՝ նաև պատճառը) և դրա ժամանակահատվածը:

26. Սահմանված կարգով կազմված դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի քարտուղարություն՝ արձակուրդի տրամադրման օրվանից առնվազն 5 աշխատանքային օր առաջ՝ արձակուրդի հրամանի նախագիծը նախապատրաստելու և ստորագրման ներկայացնելու համար:

27. Արձակուրդ տրամադրվում է գլխավոր դատախազի կամ գլխավոր դատախազի՝ ոլորտը համակարգող տեղակալի հրամանով՝ սույն կարգի 22-րդ, 23-րդ և 24-րդ կետերով սահմանված բաշխմամբ:

28. Ստորագրված հրամանի իսկական օրինակը մնում է անձնակազմի կառավարման բաժնում, պատճեններից երկուսն ուղարկվում է համապատասխան դատախազություն կամ կառուցվածքային ստորաբաժանում, իսկ երրորդ օրինակը Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչություն՝ արձակուրդի վճարման համար:

V. Այլ դրույթներ

29. Ամենամյա արձակուրդի համար անհրաժեշտ աշխատանքային ստաժի, արձակուրդից հետ կանչելու, ամենամյա արձակուրդի տեղափոխման և երկարաձգման, աշխատանքից ազատվելիս չօգտագործված ամենամյա արձակուրդի տրամադրման և դրա համար դրամական հատուցման, նպատակային արձակուրդների տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված դրույթներն այնքանով, որքանով դրանք կիրառելի են դատախազների նկատմամբ՝ օրենքի դրույթներին համապատասխան: